# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
# ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Մեծարգո՛ պարոն Սիմոնյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ եւ 67-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) օրենքի նախագիծը,

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Օրենքի նախագծի հիմնական զեկուցող՝ Գեւորգ Պապոյան:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ (021)**

23.09.2022

Հեռ.+37495910377, e-mail: gevorg.papoyan@parliament.am

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Օտարերկրացիների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-47-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետում՝ «այդ կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «մասնաճյուղերում կամ» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի համաձայն՝ առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունների աշխատակիցները՝ Հայաստանի Հանրապետությունում տեղակայված այդ կազմակերպությունների ներկայացուցչություններում աշխատելու նպատակով:

Նշված նորմի տառացի մեկնաբանման արդյունքում պարզ է դառնում, որ օտարերկրացիները կարող են աշխատել առանց թույլտվության միայն օտարերկրյա իրավաբանական անձի ՀՀ-ում տեղակայված ներկայացուցչությունում: Մինչդեռ, օտարերկրյա իրավաբանական անձի ՀՀ-ում տեղակայված մասնաճյուղում աշխատելու համար նման արտոնություն նախատեսված չէ:

Հետևաբար, Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի տառացի մեկնաբանման արդյունքում խտրական մոտեցում է ցուցաբերվում օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղի և ներկայացուցչության նկատմամբ՝ վերջինիս համար սահմանելով ավելի բարենպաստ պայմաններ իրավաբանական անձի աշխատակիցներին ՀՀ-ում աշխատանքի ներգրավելու հարցում:

Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին խտրական վերաբերմունքի արգելքի վերաբերյալ:

Մասնավորապես՝ անձի նկատմամբ խտրական վերաբերմունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

1) *պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար*

*հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (ՍԴՈ-731),*

2) *Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (ՍԴՈ-881),*

3) *խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (ՍԴՈ-1224):*

Համադրելով նշված դիրքորոշումը տվյալ դեպքի հետ, կարելի է փաստել այն, որ օտարերկրյա իրավաբանական անձի ՀՀ-ում տեղակայված մասնաճյուղի և ներկայացուցչության միջև տարբերակված մոտեցում է ցուցաբերվում, մասնավորապես՝ մասնաճյուղը, ի տարբերություն ներկայացուցչության, զրկվում է առանց թույլտվություն ստանալու օտարերկրյա իրավաբանական անձի աշխատակիցներին ՀՀ-ում աշխատանքի ընդունելու իրավունքից: *Ավելին, նման խտրական և տարբերակված մոտեցումը զուրկ է որևէ օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից, քանի որ մասնաճյուղի և ներկայացուցչության իրավական կարգավիճակը գրեթե նույնական է:*

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

1. *Ներկայացուցչություն է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:*

2. *Մասնաճյուղ է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները:*

Նշվածից հետևում է, որ ներկայացուցչությունը և մասնաճյուղը հանդիսանում են իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումներ, սակայն մասնաճյուղը իրականացնում է ավելի լայն գործառույթներ քան ներկայացուցչությունը: Ակնհայտ է, որ ՀՀ-ում տեղակայված մասնաճյուղի համար, իրականացնելով օտարերկրյա իրավաբանական անձի բուն գործառույթները, առավել կարևոր է ներգրավել վերջինիս աշխատակիցներին, հաշվի առնելով այն, որ նրանք կոնկրետ գործունեության ոլորտում արդեն իսկ մասնագիտացված և հմտացած են և կարող են նպաստել մասնաճյուղի բնականոն գործունեությանը:

Ավելին, Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի արտոնությունը նախատեսվել է հաշվի առնելով օտարերկրյա իրավաբանական անձի և ՀՀ-ում բացված առանձնացված ստորաբաժանման սերտ կապը: Գտնում ենք, որ Օրենսդրի նպատակն է եղել հնարավորություն տալ օտարերկրյա իրավաբանական անձանց անխոչընդոտ օգտագործել իրենց աշխատակիցների ներուժը ՀՀ-ում տեղակայված առանձնացված ստորաբաժամումներում, այլ ոչ թե միայն ներկայացուցչությունում: Իսկ նման արտոնությունը միայն ներկայացուցչությանը տրամադրելը չէր ունենա որևէ ողջամիտ հիմնավորվածություն: Ուստի Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի «Հայաստանի Հանրապետությունում տեղակայված այդ կազմակերպությունների ներկայացուցչություններում» ձևակերպումը խնդրահարույց է, չի համապատասխանում Օրենսդրի իրական նպատակին, ինչպես նաև համահունչ չէ խտրականության արգելման սկզբունքի հետ:

Օրենքի նման կարգավորումը անհարկի բարդություններ է առաջացնում օտարերկրյա իրավաբանական անձանց համար ՀՀ-ում ստեղծված մասնաճյուղերի միջոցով գործունեություն իրականացնելու համար, ինչն իր հերթին խոչընդոտ է հանդիսանում ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ներգրավման և արդեն իսկ գոյություն ունեցողների խթանման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետում կատարել լրացում, այն է՝ վերոնշված կետի «այդ կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «մասնաճյուղերում կամ» բառերը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**Օ Ր Ե Ն Ք Ը**
**«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 23. Աշխատանքի թույլտվություն ստանալու բացառություններ**

1. Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել՝

ա) Հայաստանի Հանրապետության մշտական և հատուկ կացության կարգավիճակ ունեցողները.

բ) սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «գ», «դ» և «զ» կետերով նախատեսված հիմքերով Հայաստանի Հանրապետության ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողները՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.

գ) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների և դրանց ներկայացուցչությունների աշխատակիցների ընտանիքի անդամները՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա.

դ) կինեմատոգրաֆիայի, թատրոնի, համերգային շրջագայությունների նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող կատարողները, արտիստները և այդ միջոցառումների համար պատասխանատու վարչական և տեխնիկական սպասարկման անձնակազմը՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ե) կանոնադրությամբ կեսից ավելիին ձայնի իրավունք տվող օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող առևտրային կազմակերպությունների հիմնադիրները և գործադիր մարմնի ղեկավարները՝ տվյալ կազմակերպություններում աշխատելու նպատակով.

զ) օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունների աշխատակիցները՝ Հայաստանի Հանրապետությունում տեղակայված այդ կազմակերպությունների <u>մասնաճյուղերում կամ</u> ներկայացուցչություններում աշխատելու նպատակով.

է) օտարերկրյա առևտրային կազմակերպության կողմից իր մասնաճյուղ կամ ներկայացուցչություն առաքվող կամ օտարերկրյա առևտրային կազմակերպություններից գնված մեքենաները, սարքավորումները, հաստոցները տեղադրելու, վերանորոգելու և դրանք շահագործելու համար աշխատողներին որակավորելու նպատակով ժամանող օտարերկրյա մասնագետները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ը) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա ժամանող մասնագետները կամ այլ անձինք.

թ) Հայաստանի Հանրապետությունում գործող ուսումնական հաստատություններում դասավանդելու, գիտական աշխատանք կատարելու (գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնելու) նպատակով հրավիրված օտարերկրացի դասախոսները, ուսուցիչները, գիտամանկավարժական գործունեություն իրականացնող այլ անձինք, ինչպես նաև այդ ուսումնական հաստատությունների ղեկավար կազմում ընդգրկված վարչակառավարչական գործառույթներ իրականացնող օտարերկրացիները.

ժ) լրատվական գործունեություն իրականացնող օտարերկրյա կազմակերպությունների հավատարմագրված ներկայացուցիչները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ժա) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող, փախստականի կարգավիճակ ունեցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.

ժբ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող բարձր որակավորում ունեցող օտարերկրացիները.

ժգ) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացմանն ուղղված աշխատանքներին մասնակցելու նպատակով ժամանած անձինք՝ այդ աշխատանքներում մասնակցելու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ժդ) համատեղ իրականացվող վարույթներով հանցագործությունների բացահայտմանն ուղղված աշխատանքներում ներգրավվելու նպատակով ժամանած մասնագետները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ժե) օտարերկրացի այն մարզիկները, որոնք ունեն պրոֆեսիոնալ կարգավիճակ և միաժամանակ կնքում են մարզական գործունեության մասին պայմանագիր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագիր գործատուի հետ.

ժզ) օրենքով սահմանված կարգով զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարգավիճակ ունեցող անձինք և հատուկ կատեգորիայի զոհի օրինական ներկայացուցիչը.

ժէ) Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.

ժը) օտարերկրացի դատապարտյալները կամ կալանավորված անձինք, ինչպես նաև պրոբացիայի շահառու հանդիսացող օտարերկրացիները.

ժթ) Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրացի ուսանողները կրթությունն ավարտելուց հետո՝ մեկ

տարվա ընթացքում, ինչպես նաև համապատասխան միջազգային պայմանագրերի հիման վրա արձակուրդների ժամանակ աշխատանքային փոխանակումների շրջանակներում աշխատանք կատարող ուսանողները.

ի) ազգությամբ հայ այն օտարերկրացիները, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է այնպիսի արտակարգ իրավիճակ, որն սպառնում է այդ անձանց քաղաքացիների կյանքին կամ առողջությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված օտարերկրացիների հետ գործատուները աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր են կնքում միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ընթացակարգով:

3. Աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունների ցանկին համապատասխանելու վերաբերյալ եզրակացությունը, ըստ իրավասությունների շրջանակի, տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած համապատասխան պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

***(23-րդ հոդվածը լրաց. 17.12.14 ՀՕ-214-Ն, 22.06.15 ՀՕ-82-Ն, 24.10.19 ՀՕ-199-Ն, 06.05.20 ՀՕ-256-Ն, խմբ. 27.05.21 ՀՕ-267-Ն, փոփ. 09.06.22 ՀՕ-238-Ն)***

***(27.05.21 ՀՕ-267-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***